«Նոր ժամանակի կրթություն» ՀԿ

ՀԵՐԹԱԿԱՆ ԱՏԵՍՏԱՎՈՐՄԱՆ ԵՆԹԱԿԱ ՈՒՍՈՒՑԻՉՆԵՐԻ ՎԵՐԱՊԱՏՐԱՍՏՄԱՆ ԴԱՍԸՆԹԱՑ

ԱՎԱՐՏԱԿԱՆ ՀԵՏԱԶՈՏԱԿԱՆ ԱՇԽԱՏԱՆՔ

Հետազոտության թեման՝ Ընտանիքի հոգեբանություն, կոնֆլիկտներ:

Առարկան՝ Հասարակագիտություն

Հետազոտող ուսուցիչ՝ Միքայելյան Լուսինե

Ուսումնական հաստատություն՝ ‹‹ՀՀ Լոռու մարզի Ալավերդու Հովհ. Թումանյանի անվան համար 2 հիմնական դպրոց›› ՊՈԱԿ

Երևան 2023

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

Ներածություն_____3

Գլուխ 1 ‹‹Ընտանիք››_____5

Գլուխ 2 ‹‹Կոնֆլիկտ››_____10

Հասարակագիտության դասաժամին կիրառվող մեթոդներ_____15

Եզրակացություն_____18

Օգտագործված գրականության ցանկ_____19

ՆԵՐԱԾՈՒԹՅՈՒՆ

Կյանքը զարգանում է,մանկավարժության դերն ու խնդիրները մեծանում են: Ինչքան էլ զարգացած տեխնիկան հեշտացնում է մարդու կյանքը բայց այն իր անդառնալի հետքն է թողնում մարդու և հասանակության կյանքում:Գնալով բնությունից կտրված կյանքով ապրող մարդը դժվար է լեզու գտնում այլ մարդկանց հետ,միջավայրում , ընտանիքում,որն էլ իր անդրադարձն է ունենում երեխայի կյանքում:Աշխատանքից հոգնած տուն վերադարձած,բազմաթիվ կենցաղային խնդիրներ ունեցուղ մարդը դժվարանում է խուսափել վեճերից ու կոնֆլիկտներից,ինչն էլ իր անդրադարձն է ունենում մեր սովորողների վրա: Առավել քան երբևէ մեր `մանկավարժներիս վևա մնում գտնել այնպիսի դաստիարակության միջոցներ,որ չխոցի առանց այն էլ խոցելի դեռահասին և պատրաստի նրան կյանքի դժվարություններին,հնարավորություն տա խուսափել կոնֆլիկտային իրավիճակներից:Հասարակական կյանքի անբաժանելի մաս հանդիսացող կրթությունը բոլոր դարաշրջաններում ուղղված է եղել հասարակության պահանջների բավարարմանը: Կրթության նպատակը մանկավարժության մեջ միշտ եղել է անփոփոխ' աճող սերունդը նախապատրաստել կյանքին, ձևավորել տվյալ ժամանակաշրջանի համար հասարակության լիարժեք, ակտիվ անդամներ, իսկ կրթության խնդիրներն անընդհատ փոփոխվել են' պայմանավորված նոր հասարակական պահանջների ձևավորմամբ, տվյալ հասարակության տնտեսական, գիտական, մշակութային զարգացմամբ:

Արդի մանկավարժական որոնումները նպատակ ունեն ուսուցման գործընթացը դարձնել այնպիսին, որ սովորողները դառնան այդ գործընթացի ակտիվ մասնակիցները, որ նրանց պասսիվ ունկնդրողի դերը փոփոխվի ակտիվ մասնակցի դերով: Դրա շնորհիվ աշակերտները դառնում են առավել անկաշկանդ ու ինքնուրույն, նրանց մոտ ձևավորվում են ուսման դրական դրդապատճառներ, ճանաչողական հետաքրքրություններ ու կարողություններ:

Սովորողների ճանաչողական կարողությունների ձևավորումն ու զարգացումը ժամանակակից մանկավարժության կողմից դիտարկվում է որպես արդի հասարակական պահանջ և կրթության կարևոր խնդիր: Ճանաչողությունը մարդկային մտածողության մեջ իրականության արտացոլման ու վերարտադրման գործընթաց է, որն ապահովում է ճշմարտության իմացում, գիտելիքների ձեռք բերում, յուրացում, ցանկացած կատարած աշխատանքում ստեղծագործական մոտեցում: Վերը նշված կարևորագույն խնդիրների լուծման նպատակով ժամանակակից մանկավարժության մեջ կիրառվում են բազմաթիվ մանկավարժական տեխնոլոգիաներ: Ուսուցման գործընթացի կատարելագործմանը, սովորողների ակտիվացմանը, ճանաչողական կարողությունների ձևավորմանն ու զարգացմանը մեծապես նպաստում է մանկավարժական տեխնոլոգիաների շարքում իր ուրույն տեղն ունեցող ընտանեկան հոգեբանությունը, կոնֆլիկտները: Որպես հետազոտական թեմա ընտրել եմ ընտանեկան հոքեբանությունը, քանի որ հենց այսեղից է սկիզբ առնում այն անձը, անհատը ով պետք է դառնա մեր երկրի լիիրավ քաղաքացին և մեր ապագան: Շատ կարևոր է, որ երեխան մեծանա և դաստիրակվի առողջ ընտանեկան մթնոլորտում, քանի որ ընտանեկան միությունը ոչ միայն համայնքի

մի միավոր է, այլ նաև փոքրիկ պետություն իր օրենքներով և արժեքներով։ Սա յուրաքանչյուր մարդու կյանքում ամենակարևորն է : Ընտանիքը մի տեղ է, որտեղ բոլորը ծնվում են դաստիրակվում, ձեռք են բերում հմտություններ, մարդասիրություն, քաղաքավարության կանոններ, և մարդկային հատկանիշներ։ Ծնողներն օգնում են մեզ այս բոլոր փուլերով անցնելիս և ամենակարևոր դերն են խաղում մեր կյանքում։ Եղբայրներն ու քույրերն նույնպես ազդում են մեր ինքնազարգացման վրա, քանի որ նրանց գոյության դեպքում մենք մեզ ավելի պաշտպանված ենք զգում, նրանք օգնում են մեզ ավելի լավ հասկանալ շրջակա աշխարհն ու միջավայրը։ Եթե դպրոցում մեզ սովորեցնում են տարբեր առարկաներ, որոնք կօգնեն մեզ ապագայում կարիերա կառուցել և դառնալ խոստումնալից անձ, ապա տանը մեզ ծնողները տալիս են դաստիրակություն, լավ սովորույթներ, վերաբերմունք և խնամք, որպեսզի մենք կարողանանք մեր մեջ

կառուցել մեր իսկ ստեղծած ընտանիքի մոդելը, ըստ որի էլ հետագայում կունենանք այն:

Գլուխ 1 «Ընտանիք»

Ընտանիք, ամուսնության կամ ազգակցության վրա հիմնված՝ մարդկանց փոքր խումբ, որի անդամները միմյանց հետ կապված են կենցաղի ընդհանրությամբ, փոխադարձ օգնությամբ և բարոյական պատասխանատվությամբ: Որպես սոցիալական երևույթ, ընտանիքը փոխվում է հասարակության տնտեսական հիմքի զարգացմանը համապատասխան՝ պահպանելով հարաբերական ինքնուրույնություն:

Նախնադարյան հոտի շրջանում, երբ ազգակցությունը չուներ հասարակականտնտեսական նշանակություն, ընտանիք գոյություն չուներ: Մայրիշխանության պայմաններում (ստորին պալեոլիթի վերջ) առաջանում է հնագույն (խմբակային) ընտանիք, ուր մի տոհմի բոլոր կանայք մի ուրիշ տոհմի բոլոր տղամարդկանց հնարավոր կանայք էին. տղամարդիկ ապրում էին իրենց տոհմում (արտատեղային բնակություն), երեխաները ճանաչում էին միայն մորը, համարվում նրա տոհմի անդամը և մտնում մոր գծով ազգականների խմբի մեջ: Հետագայում, խմբամուսնության ներսում, որոշ զույգերի համատեղ ապրելը նպաստեց զուգային, դեռևս անկայուն ընտանիքի առաջացմանը, ամուսինն սկսեց փոխադրվել կնոջ տոհմը (մայրատեղային բնակություն), երեխաներն առաջվա նման պատկանում էին մոր տոհմին, իսկ ամուսինների ունեցվածքն առանձին էր: Այդպիսի ընտանիքում ամուսիններն իրավահավասար էին: Որպես սոցիալական կայուն միավորում, ընտանիքը առաջացել է նոր քարի դարի վերջում՝ տոհմատիրական կարգերի քայքայման, մասնավոր սեփականության, հավելյալ արդյունքի և դասակարգերի առաջացման հետևանքով: Մայրիշխանությունից հայրիշխանության անցմանը, արտադրողական ուժերի հետագա զարգացմանը և տնտեսության մեջ տղամարդու դերի ուժեղացմանը զուգընթաց առաջանում են նահապետական ընտանիքը և մենամուսնությունը, հաստատվում է տղամարդու իշխանությունը կնոջ և երեխաների վրա, երեխաներն ստանում են հոր ունեցվածքը ժառանգելու իրավունք: Նահապետական ընտանիքը անցումային ձև էր զուգային ընտանիքից մենամուսնական կամ փոքր ընտանիքի, ուր ծնողներն ու երեխաները առանձին տնտեսական բջիջ էին կազմում:

Ստրկատիրական և ֆեոդալական հասարակարգերում ուժեղանում է տղամարդու իշխանությունը ընտանիքում: Կապիտալիստական հասարակարգում արտադրությանն անմիջականորեն մասնակցելու և սեփական վաստակի շնորհիվ կինն աստիճանաբար ապահովում էր իր տնտեսական ինքնուրույնությունը: Հեղափոխական պայքարի ազդեցությամբ շատ երկրներում կանանց տրվեցին քաղաքացիական իրավունքներ (այդ թվում՝ ամուսնալուծության): Կապիտալիզմի տնտեսական, քաղաքական և բարոյական հակասությունների հետևանքով ընտանիքը աստիճանաբար օտարվում է հասարակությունից: Դեռևս վաղ ֆեոդալիզմի շրջանից ընտանիքի հիմնական ձևը Հայաստանում եղել է փոքր ընտանիքը, որին զուգահեռ պահպանվում էր նաև մեծ նահապետական ընտանիքը: Այդ շրջանի հայկական ընտանիքում ևս հաստատված էր տղամարդու (հոր, ամուսնու, նրա բացակայության դեպքում՝ ավագ որդու) իշխանությունը: Նա էր տնօրինում հողը, նյութական մյուս միջոցները, լուծում ընտանիքի չափահաս անդամների ամուսնության, ժառանգության և այլ հարցեր: Հնագույն ընտանեկան

ձևերի վերապրուկները հայերի մեջ, սկսած 20-րդ դարի սկզբից, աստիճանաբար վերանում են:

Ընտանեկան հոգեբանություն

Ընտանիքի հոգեբանություն, հոգեբանության բաժին է, որն ուսումնասիրելով էվոլյուցիան ու բնույթը ամուսնության և ընտանեկան հարաբերությունների, նրանց առաջացման յուրահատկությունները, ձևավորումը, կայունացումն ու քայքայումը, նկարագրելով ընտանեկան և ամուսնական հատկանիշների, ընտանիքի անդամների սոցիալ-հոգեբանական և ֆունկցիոնալ առանձնահատկությունները միմյանց հետ:
1960-1970-ական թվականներին՝ ամուսնությունն ու ընտանիքը հետազոտությունների առարկա դարձան մասնագետների, այդ թվում նաև հոգեբանների կողմից: Սկզբում ընտանիքը ուսումնասիրվել է հոգեկան հիվանդությունների հետ կապված կանխարգելումը կամ ընտանիքի դաստիարակության թերությունները: Ավելի ուշ, ընտանիքի հոգեբանության տեսողական դաշտում աչքի ընկան այնպիսի գիտության բնագավառներ ինչպիսիք են՝ պատմությունը և էվոլյուցիայի ամուսնության ձևը, ընտանեկան կյանքի ցիկլը, ամուսինների փոխհարաբերությունները, ծնողների և երեխաների փոխհարաբերությունները, ընտանիքի և հասարակության փոխհարաբերությունները և այլն:Ընտանեկան հոգեբանության տիրույթում է գտնվում ընտանիքում՝ սեռական հարաբերությունների հարցը:

Ընտանիքի հոգեբանական բնութագիրը

Ընտանիքի հոգեբանությունը՝ որպես հոգեբանության մի առանձին ճյուղ, ուսումնասիրվել է բազմաթիվ հոգեբանների կողմից: Ինչպես հայտնի է ժամանակակից գրականությունից ընտանեկան կյանքին նախապատրաստելու կարևոր ուղղություններից մեկն այն է, որ աղջիկներն ու պատանիները հասկանան, որ ամուսնությունը ոչ թե ընտանեկան երջանկությունն ընտրելու ավարտն է, այլ նրա սկիզբը: Յուրաքանչյուր երիտասարդ մինչ ամուսնանալը պետք է տեղեկացվի, թե ինչին կարող է նա բախվել ամուսնական կյանքի ընթացքում: Եվ որպեսզի ընտանիքը լինի բարեհաջող, ապա բոլոր պատկերացումները պետք է լինեն համատեղ, որպեսզի ամուսիններից յուրաքանչյուրի վարքը չհակադրվի մյուսի պատկերացումներին: Զուգընկերների դերերը և՛ կնոջից, և՛ ամուսնուց պահանջում են ընտանիքում տնտեսումը, երեխաների հանդեպ պատասխանատվությունը: Հասարակության համար կարևոր է ոչ միայն ամուսնության կայունության փաստը, այլև ներընտանեկան հարաբերությունների որակը, դրանց խանգարումների հետևանքները: Շատ էական է համարվում ընտանիքում անդամների միջև աֆեկտիվ կապերը: Միջանձնային հարաբերությունները սուբյեկտների փոխադարձ պատրաստակամությունն է որոշակի փոխգործողությունների տիպին: Հուզական կայունությունը պայմանավորված է ամուսինների զգացմունքներով (սեր, համակրանք, հարգանք): Որպես կանոն, երեխաները ծնողների գործերը և առօրյան դարձնում են ավելի հաճելի: Ծնողների վերաբերմունքն իրենց երեխաների

նկատմամբ շատ դեպքերում տարբեր է: Այժմ երեխաներով շատ ընտանիքներում կարելի է տեսնել, որ մեծերին հարգում են, իսկ փոքր երեխաներին երես են տալիս: Միջին տարիքի երեխաներին, որոնց մոռանում են, հիմնականում ավելի լավ մարդիկ են դառնում:Ընտանիքը կարելի է բնութագրել որպես պատմականորեն կոնկրետ հարաբերությունների համակարգ ամուսինների միջև, որպես փոքր սոցիալական խումբ, որի անդամները կապված են ամուսնական կամ ազգակցական հարաբերություններով, կենցաղի ընդհանրությամբ և փոխադարձ բարոյական պատասխանատվությամբ, և որի սոցիալական անհրաժեշտությունը պայմանավորված է հասարակության բնակչության ֆիզիկական և հոգևոր վերարտադրության պահանջմունքով: Դեռևս Արիստոտելն է նշել. ՝Ընտանիքը հասարակության բջիջն է՝: Այսինքն հասարակությունը, հետևաբար նաև պետությունը, կարող են առողջ լինել, եթե առողջ և կայուն է ընտանիքը: Իսկ ե±րբ է ընտանիքը առողջ: Ընտանիքի հոգեբանության մասնագետները գտնում են, որ հոգեբանորեն առողջ է այն ընտանիքը, որում հուզական փոխհարաբերությունները ձևավորված ու կայուն են թե ամուսինների, թե ծնողների ու երեխաների միջև: Այսինքն առողջ ընտանիքում տիրում է դրական բարոյա-հոգեբանական մթնոլորտ: Ամուսնությունը հենված է դրդապատճառների համակարգի վրա: Դրդապատճառները հենված են գիտակցության աստիճանի վրա և իրականացնում են անձի կյանքի կարևոր հարաբերությունները աշխարի նկատմամբ, կազմում են մարդկային պահանջմունքների հիմքը:

Ընտանիքի տեսակները

Ընտանքն ամուսնության, ազգակցության կամ որդեգրման վրա հիմնված մարդկանց փոքր խումբ, որն ապրում է մի հարկի տակ և վարում է ընդհանուր տնտեսություն: Ընտանիքի անդամները սովորաբար միմյանց հետ կապված են զգացմունքային կապերով, միմյանց նկատմամբ զգում են փոխադարձ պատասխանատվություն: Ընտանքիը նաև սոցիալական ինստիտուտ է, այսինքն՝ մարդկանց փոխհարաբերությունների կայուն ձևը, որի շրջանակներում իրականացվում է մարդկանց առօրյա կյանքի հիմնական մասը սեռական հարաբերություններ, մանկածնություն և երեխաների սկզբնական սոցիալականացում, կենցաղային խնամքի, կրթական և բժշկական սպասարկման նշանակալի մաս և այլն:
Առավել տարածված տիպը նուկլեար ընտանքին է (լատ. nucleus - կորիզ), որը բաղկացած է ամուսինների մեկ զույգից՝ երեխաներով կամ առանց երեխաների:շՆուկլեար ընտանքիը կարող է լինել նաև լրիվ կամ ոչ լրիվ՝ բաղկացած մեկ ծնողից և երեխաներից: Ընտանքիը դառնում է ոչ լրիվ ամուսնալուծության, այրիանալու, միայնակ մայրության հետևանքով:
Եթե ընտանքում ամուսնական զույգից և նրանց երեխաներից բացի կան այլ ազգականներ, ապա այն կոչվում է ընդլայնված ընտանիք կամ գերդաստան: Ընտանեկան հարաբերությունների հիմքում ընկած է ընտանիքի պատմական զարգացումը: Այսինքն այն զարգանում է պարզից դեպի բարդ, մայր իշխանությունից դեպի հայր իշխանություն, պոլիգամիայից դեպի մոնոգամիա:

Ընտանիքը դասակարգվում է ըստ դունկցիաների և ըստ կառուցվածքի:
1. Էնդոգամիա կամ էկզոգամիա- էնդոգամիա ամուսնություն միևնույն սոցիալական շերտի միջև, էկզոգամիա՝ հասարակության տարբեր շերտերի միջև ամուսնություն:
2. Պոլիգամիա, մոնոգամիա և հերթափոխվող մոնոգամիա - պոլիգամիան դա բազմամուսնությունն է, այսինքն՝ պոլիանդրիա (մեկ կին մի քանի տղամարդ) և պոլիգիմիա (մեկ տղամարդ, մի քանի կին): Մոնոգամիան դա մենամուսնությունն է՝ մեկ կին, մեկ տղմարդ և հերթափոխվող մոնոգամիան դա կոնկրետ ժամանակաշրջանում ապրում են մեկի հետ, հետո ամուսնալուծվում և նորից են ամուսնանում:
3.Ավանդական հայրիշխանություն ,ավանդական մայրիշխանություն , նեոհայրիշխանություն (նոր), նեոմայրիշխանություն և էգալիտար ընտանիք (հավասար իրավունքներով ընտանիք):
Ավանդական հայրիշխանություն- հին ավանդական ընտանքին է, որտեղ ընտանիքի գլուխը ամենամեծ տղամարդն է:
Նեոհայրիշխանություն- երբ տղամարդն իր վար է կրում բոլոր տնտեսական խնդիրները, մշակում է ընտանիքի հեռանկարային պլանը, իսկ կինը լուծում է կոնկրետ մասնավոր խնդիրներ և ապահովում ընտանիքի բարոյահոգեբանական կայունությունը:
Էգալիտար-երբ բոլոր իրավունքները հավասար են:
4. Լրիվ ընտանիք, կիսատ և ֆունկցիաների առումով կիսատ ընտանիք:
Լրիվ ընտանիքի մոդելն արդեն իսկ պարզ է, իսկ երկրորդ խմբի ֆունկցիաների առումով ընտանիքի տեսակներն են՝ նորմալ, բարենպաստ, անբարենպաստ և այն ընտանիքները, երբ ամուսինները ամուսնական կյանքով բավարարված են կամ որևէ մեկը բավարարված չէ:
Ընտանիքը բաց համակարգ է և այն անընդհատ ենթարկվում է շրջապատին, փոփոխվող ազդեցություններին:
Իր ներքին ներդաշնակությունը ապահովելու համար նա պետք է ապահովի 3 կարևոր գործնթացների ներդաշնակությունը՝
1. Ասիմիլացիայի - այն ապահովում է ընտանիքի ներքին կայունությունը:
2. Ակոմոդացիայի - այն ապահովումէ նորի մուտքը ընտանիք առանց հնին վնասելու:
Ադապտացիայի - արդյունքում ապահովում է ադապտացիայի գործընթացը:
Ճգնաժամային ընտանիք - հետաքրքրությունների և պահանջմունքների հակադրությունները կրում են սուր բնույթ և ներառում է ընտանիքի կենսագործունեության կարևորագույն ոլորտը, այսինքն՝ կոնֆլիկտի համար ազդակ կարող են դառնալ բոլոր վերոհիշյալ պատճառները: Ամուսինները զբաղեցնում են անհանդուրժողական, աններողամիտ, և նույնիսկ թշնամական դիրք մեկը մյուսի նկատմամբ, չհամաձայնվելով ոչ մի զիջման: Ճգնաժամային ամուսնական միությունների թվին կարելի է դասել նաև այն ընտանիքները, որոնք քայքայվում են, կամ գտնվում են փլուզման եզրին:
Կոնֆլիկտային ընտանիք - ամուսինների միջև առկա են մշտական ոլորտներ,

որոնցում իրենց հետաքրքրությունները բախվում են, առաջ բերելով ուժեղ և շարունակական բացասական հուզական վիճակներ:Սակայն ամուսնությունը կարող է պահպանվել ուրիշ գործոնների շնորհիվ, ինչպես նաեւ զիջումների եւ կոն ֆլիտների փոխզիջումային լուծումների միջոցով: Պրոբլեմային ընտանիք - սրան բնորոշ են դժվարությունների տևական գոյությունը, որն ընդունակ է զգալի հարված հասցնել ամուսնության կայունությանը: Այսպիսի ընտանիքներում հավանական է փոխհարաբերությունների սրացում, ամուսիններից մեկի, կամ երկուսի մոտ էլ հոգեկան խանգարումների դրսեւորում:

Նևրոտիկ ընտանիք - այստեղ հիմնական դերը խաղում են այն գործոնների կուտակումը, որոնք հանգեցնում են հոգեբանական դժվարությունների: Ամուսինների մոտ նկատվում է բարձր տագնապայնություն, քնի խանգարում, ցանկացած առիթով հուզական դրսևորումներ, բարձր ագրեսիվություն և այլն: Ամուսինների կոնֆլիկտային վարքը կարող է դրսեւորվել գաղտնի, քողարկված և բաց ակնհայտ ձևերով:

Սոցիալականացումը ընտանիքում

Անձի, անհատի կայացումը, սոցիալականացումը սկսվում են ընտանիքում:

Նորմալ պայմաններում ծնողների վարքը ընթանում է 3 մոդելներով.

1. Ծնողի վերահսկողության մոդելն է, երբ ծնողը ուշադիր է բարյացակամ վերաբերմունք ունեն երեխայի նկատմամբ, բայց նաև հսկում են երեխային և որոշակի պահանջներ ներկայացնում, կատարում են երեխայի ցանկությունները, բայց ունեն իրենց հստակ ուղղվածքությունը և բացատրում են երեխային իրենց պահանջների իմաստը: Այս երեխաների մոտ արտահայտվում են բարձր մակարդակի ինքնուրույնություն, հետաքրքրասիրություն, ընկերասիրություն, շրջապատում կողմնորոշվելու կարողությթուն:
2. Ծնողի գերիշխման մոդելն է , երբ ծնողները խիստ են, պատժում են, համարյա քիչ են շփվում երեխայի հետ, երեխան իր սեփական կարծիքն արտահայտելու իրավունք չունի: Այս ընտանիքը երեխային օտարելու հնարավորություններ է ստեղծում և նման ընտանիքում երեխայի սոցիալականացումն անհնար է: Այս երեխան շատ ցածր ինքնագնահատական ունի, չի վստահում մարդկանց և ինքնամփոփ է:
3. Ներողամտության մոդել, երբ ծնողները ներողամիտ են, պահանջկոտ չեն, ընտանիքը առանձնապես չի զբաղվում երեխայի դաստիարակությամբ: Այս երեխաների մոտ շատ ցածր ինքնատիրապետում կա, ինքնավստահությունը շատ ցածր մակարդակի վրա է: Այսպիսի ընտանիքում մեծացող երեխան արագ անկախանում է, որովհետև բարձիթողի է, ազատ: Չունեն հետաքրքրություններ, նրան զգում են որ բեռ են ընտանիքի համար:

Գլուխ 2 «Կոնֆլիկտ»

Ի՞նչ է կոնֆլիկտը

Կոնֆլիկտ (լատ.՝ *conflictus* - ընդհարում),

- Հակադիր շահերի, հայացքների, ձգտումների բախում, ընդհարում, պայքարի հասցնող տարաձայնություն, սուր վեճ:

Կոնֆլիկտների հիմնական կառուցվածքային տարրերը հետևյալն են՝

1. Կոնֆլիկտի օբյեկտը այն սոցիալական երևույթն է, որի պատճառով առաջացել է տվյալ կոնֆլիկտային իրավիճակը: Այդ երևույթը կառավարելու, իշխելու իրավունքը ձեռք բերելու պայքարը բերում է կոնֆլիկտների: Կոնֆլիկտի օբյեկտը բնութագրվում է նրանով, որ այն կարող է լինել ինչպես նյութական, այնպես էլ հոգեբանական:
2. Կոնֆլիկտի մասնակիցները առանձին անձինք են, մարդկանց խմբեր, կազմակերպություններ, պետություններ: Կոնֆլիկտի մասնակիցները իրականացնում են միմյանց դեմ ակտիվ կամ պասիվ գործողություններ: Կոնֆլիկտի օբյեկտի և մասնակիցների առկայությունը առաջացնում է կոնֆլիկտային իրավիճակ: Կոնֆլիկտային իրավիճակ կարող է գոյություն ունենալ, սակայն կոնֆլիկտ կարող է և չլինել:
3. Միջադեպը կոնֆլիկտի մասնակիցների կողմից իրականացվող գործողություն է, որի նպատակն է տիրել օբյեկտին և ոտնահարել նրա շահերը:

Այսպիսով կոնֆլիկտային իրավիճակին գումարած միջադեպ հավասար է կոնֆլիկտ:

Կոնֆլիկտի պատճառները

Կոնֆլիկտի պատճառ են այն երևույթները, իրադարձությունները, փաստերը, որոնք նախորդում են կոնֆլիկտին և սուբյեկտների գործունեության որոշակի պայմաններում առաջանում են կոնֆլիկտներ: Կոնֆլիկտների առաջացման պատճառները բաժանվում են երկու խմբի՝ մասնավոր և ընդհանուր:

Ընդհանուր պատճառներն են՝

1. սոցիալ- քաղաքական և տնտեսական պատճառները կապված երկրում առկա իրավիճակի հետ,

սոցիալ- ժողովրդագրական պատճառները արտացոլում են մարդկանց տարբերությունները պայմանավորված նրանց սեռով, տարիքով, էթնիկ խմբի պատկանելիությամբ և այլն,

սոցիալ- հոգեբանական պատճառներ, որոնք ներառում են խմբում փոխհարաբերությունները, լիդերությունը, կոլիկտիվի կարծիքը և այլն,

անհատական-հոգեբանական պատճառներ, որոնք արտացոլում են անձի անհատական հատկությունները, ընդունակությունները, խառնվածքը, բնավորությունը և այլն:

Մասնավոր պատճառներն են՝

գործունեության պայմաններով անբավարարվածությունը,

պաշտոնական էթիկայի խախտումը,
աշխատանքային օրենսդրության խախտումը,
ռեսուրսների սահմանափակությունը,
նպատակներում տարբերությունները,
անբավարար հաղորդակցումը:

Ընտանեկան կոնֆլիկտներ

Ցանկացած ընտանիքում վեճերն ու կոնֆլիկտներն անխուսափելի են, եթե չկան վեճեր նշանակում է ընտանիքում տիրում է սառը պաշտոնական հարաբերություններ:
Ընտանեկան վեճերն իրենց բնույթով կարող են լինել պերմանենտ (անընդհատ): Նման ընտանիքները հիմնականում լինում են քրեածին, կոնֆլիկտածին, ամբարենպաստ ընտանքիներ:
Վեճերի ժամանակ գլխուղեղի կեղևում առաջանում է օպտիմալ գրգռման օջախ, որը կարող է ընդգրկել ահռելի ու ավելի կետերի տարածք:
Այս դեպքում մարդը կորցնում է ինքնատիրապետումը, դիմացինին լսելու ունակությունը և վեճը վերածվում է կոնֆլիկտի: Ցանկացած վեճի հիմքում ընկած է անհատականության երևույթը, այսինքն անհատականը:
Մարդը աշխատում է հնարավորինս վիրավորելով դիմացինին բարձրացնել "Ես"-ի արժեքը: Կոնֆլիկտի հիմնական պատճառը անձնավորության որևիցե պահանջմունքի չբավարարված լինելն է: Սկսած ֆիզիկական, կենսաբանական, ֆիզիոլոգիականից մինչև հոգևոր պահանջմունքները:Կոնֆլիկտների մեխանիզմը հասկանալու համար անհրաժեշտ է առանձնացնել պատկերացումների 3 համակարգ՝

1. էգոցենտրիկ համակարգ - որի հիմքում ընկած է սեփական Ես-ը, այլ մարդիկ կամ առարկաները հանդես են գալիս որպես կամ օգտակար գործիք կամ խոչընդոտ:
2. Այլետորոցենտրիկ համակարգ - կենտրոնում ընկած է ուրիշը:
3. Սոցիոցենտրիկ - հիմքում ըմկած է մեկը:

Ընտանիքի համար ճգնաժամային շրջաններն են՝

1. Միմյանց հարմարվելու փուլ՝ամուսնական կյանքի առաջի տարին է, երբ ձեվավորվում է նոր որակի հարաբերություններ, նոր հոգևոր արժեքներ:
2. Երեխա ունենալու փուլ՝ երեխաների ծնունդը բարդացնում է ամուսինների մասնագիտական աճի հնարավորությունները, քիչ ժամանակ է տրամադրվում անձնական գրավիչ գործունեությանը (հոբբի), կնոջ հոգնածության պատճառով, կապված երեխայի խնամքի հետ, ժամանակավոր սեռական ակտիվության նվազումը:
3. Բախման փուլ՝ երեխաների դաստիրակության վերաբերյալ ամուսինների և նրանց ծնողների հայացքների, տեսակետների բախումը:
4. Միապաղաղության, կամ միջին ամուսնական տարիքի փուլ՝ այս շրջանը երբեմն

անվանում են նաև զգացմունքների հագեցվածության փուլ, կամ քաղցի շրջան:

5. Ինվոլուցիոն**,** կամ միայնակության զգացման փուլ**:**

Այս շրջանը համարվում է 18-ից 24տարի համատեղ կյանքից հետո, որը հաճախ համընկնում է ինվոլուցիոն շրջանի հետ: Կարող է ձեւավորվել միայնակության զգացում՝ կապված երեխաների հեռանալու հետ: Այս փուլում հսկայական նշանակություն ունեն արտաքին գործոնները՝ նյութական վիճակի վատթարացումը, աշխատանքի անցնելու անհնարինությունը, սեփական բնակարանի բացակայությունը և այլն: Ընտանեկան անբավարարվածության վիճակն առաջանում է կոնֆլիկտային իրավիճակների արդյունքում, որոնցում դրսեւորվում է տարաձայնություն տվյալ անհատի վերաբերյալ, սպասումների և նրա իրական կյանքի միջև: Կոնֆլիկտից կոնֆլիկտ, կուտակվելով, այսպիսի անբավարարվածությունը արտահայտվում է հուզական պոռթկումներում և հիստերիկ դրսեւորումներում, որոնց հաճախականացումը կարող է լրջորեն խաթարել ընտանիքի ամրությունը: Ճնշող մեծամասնությամբ, պատճառները, որոնք հանգեցնում են ընտանիքում կոնֆլիկտային իրավիճակի, առաջ են բերվում սոցիալական գործոններով:

Ընտանիքի հոգեբանություն**.** Երջանկության որոնման ճանապարհին

«Բոլոր երջանիկ ընտանիքները նման են իրար, յուրաքանչյուր դժբախտ ընտանիք դժբախտ է յուրովի»: Լ. Տոլստոյ Մեծ դասականը, թերևս, միաժամանակ և' ճիշտ է, և՛ սխալ, քանի որ տարբեր մարդկանց համար երջանկությունը նույնպես չի կարող միանման լինել: Բայց ընտանեկան երջանկության հասնելու երկու կարևոր նախապայմանները, իսկապես, առկա են բոլո՛ր երջանիկ ընտանիքներում: Դրանք են փոխըմբռնումն ու հետաքրքրությունների ընդհանրությունը: Իսկապես, չէ՞ որ շատ դժվար է երջանիկ համարել այն մարդկանց, ովքեր ապրում են միևնույն հարկի տակ և չունեն ընդհանուր հետաքրքրություններ: Ընդ որում պարտադիր չէ, որ հետաքրքրություններն ամեն ինչում համընկնեն: Պարզապես շատ կարևոր է, որ ընտանիքի յուրաքանչյուր անդամի համար վճռական պահերին հակասություններ չծագեն: Հենց այդ ժամանակ է, որ օգնության է հասնում փոխըմբռնումը: Սիրել նշանակում է ոչ թե տեսնել միմյանց, այլ նայել միևնույն ուղղությամբ: Ոչ պակաս կարևոր է, որ ամուսիններն ունենան ընդհանուր զբաղմունք: Եթե ձեր հետաքրքրությունները համընկնում են, և դուք հաճույք եք ստանում միևնույն բաներից, ձեր կյանքի ռիթմերը մեծ մասամբ համընկնում են, և դուք միշտ զրույցի ընդհանուր թեմա եք գտնում: Ընդհանուր գործի առկայությունը «սոսնձում» է ընտանիքի անդամներին, և ներընտանեկան քննարկումների հնարավորություն ընձեռում: Աշխատեք հնարավորինս շա՛տ շփվել միմյանց հետ: «Երջանկությունն այն է, երբ քեզ հասկանում են»: Անժխտելի է, որ ընտանիքում բոլորիս համար էլ ամենակարևորը հասկացված լինելն է, առավել ևս՝ նրա կողմից, ում հանդիպել ենք ճակատագրորեն և ում հետ ապրում ենք միևնույն հարկի տակ: Դիմացինի կողմից

ըմբռնողության դրսևորումն օգնում է համոզվել սեփական իրավացիության մեջ և ինքնավստահություն ձեռք բերել: Դա նաև օգնում է հասնել հոգեկան հանգստության, որին ձգտում ենք ամենքս: Գիտականորեն ապացուցված է, որ երեխան որքան շատ մարդկանց հետ է շփվում, և որքան շատ մարդիկ են անկեղծորեն սիրում նրան, այնքան նրա համար ապրելը հեշտ է լինում և իրեն ավելի երջանիկ է զգում: Միայն երջանիկ, լավատեսորեն տրամադրված մարդը կարող է երջանիկ ընտանիք կազմել և կյանքի նկատմամբ իր դրական մոտեցումները փոխանցել ընտանիքի մյուս անդամներին: Իդեալական ընտանիքը մտացածին չէ, այն իսկապես իրականության է վերածվում, երբ փոխադարձ սիրով կապված մարդիկ պատրաստ են լինում համատեղ նվիրվել նոր Մարդու՝ սեփական զավակի դաստիարակման դժվարին գործին: Ընտանիքում ամենակարևորը ՍԵՐՆ է: Ընտանիքում համերաշխության մթնոլորտը հատկապես կարևոր է զավակների մեջ սիրելու կարողություն սերմանելու համար: Ծնողների սերը զավակների հանդեպ չափազանց կարևոր է, սակայն այն չպետք է այնքան ուժգին լինի, որ վերածվի տիրելու ցանկության: Պետք է երեխաներին ինքնուրույնություն ձեռք բերելու հնարավորություն տալ: Ընտանեկան կյանքում որևէ բան ձեռնարկելիս անհրաժեշտ է կա՛մ սիրահոժար համաձայնություն, կա՛մ լիովին պառակտում: Շատ են ամուսնական այն զույգերը, որոնք, չհամակերպվելով երկուսի համար էլ անտանելի դարձած մթնոլորտին, շարունակում են համատեղ ապրել և թունավորել մեկմեկու կյանքը: Սրա պատճառն այն է, որ նրանք չեն կարողանում որոշում կայացնել. կա՛մ կատարյալ պառակտում, կա՛մ համաձայնություն: Ամուսինների միջև միջանձնային կոնֆլիկտների տիպերը Ամուսինների միջև հաճախ վեճերն սկսվում են միմյանց պահանջմունքները չբավարարելուց: Այդպիսի վիճաբանությունները կարող են ծագել հետևյալ պատճառներով. ամուսինների հոգեսեռական անհամապատասխանությունը, սեփական «ես»-ի նշանակալիության և արժանապատվության ոտնահարումը կողակցի կողմից, դրական հույզերի, քնքշանքի, հոգատարության, փոխըմբռնման բացակայությունը, ամուսիններից մեկի կողմից սեփական պահանջմունքների բավարարման մոլուցքը (ալկոհոլի, թմրանյութերի օգտագործումը, ֆինանսական միջոցները միայն իր պահանջմունքների բավարարման համար ծախսելը), փոխօգնության և փոխըմբռնման բացակայությունն այնպիսի ընդհանուր հարցերում, ինչպիսիք են տնտեսություն վարելը, երեխաների դաստիարակությունը, ծնողների հետ հարաբերությունները, ժամանցի կազմակերպման եղանակների ու ձևերի հարցում տարաձայնությունները: Գոյություն ունեն ամուսինների միջև կոնֆլիկտների առաջացմանը նպաստող առանձին գործոններ, որոնք դրսևորվում են համատեղ կյանքի որոշակի ժամանակահատվածներում: Դրանք ընտանիքի զարգացման ճգնաժամային փուլերն են: Ընտանեկան կյանքի առաջին տարին բնութագրվում է հարմարվողականությամբ: Երբ երկու «ես»-երը դառնում են «մենք», տեղի է ունենում զգացմունքների էվոլյուցիա, սիրահարվածությունը չքանում է, և ամուսինները միմյանց սկսում են տեսնել այնպիսին, ինչպիսին կան իրականում: Ամուսնական առաջին տարին համարվում է ճգնաժամային. ամուսնալուծության

հավանականությունն այս փուլում 30 տոկոս է: Ճգնաժամային մյուս փուլը համընկնում է երեխաների ծննդի հետ: Դեռ չամրացած «մենք»-ը լուրջ փորձության է ենթարկվում: Ճգնաժամային երրորդ փուլում տպավորությունների բազմակի կրկնությունները հանգեցնում են միմյանցից «հագեցվածության», և առաջանում է զգացմունքների, տպավորությունների քաղց: Ընտանեկան երջանկության համար կարևոր են փոխադարձ հարգանքն ու սերը, ապրումակցելու և հոգ տանելու կարողությունը: Ըստ հոգեբանների՝ ամուսնական կյանքում անհրաժեշտ է, որ՝ Ունենաք ապրելու սեփական ոճը, հետաքրքրությունները: Անհրաժեշտ է պլանավորել ապագան, բայց նաև՝ չհրաժարվել ամենօրյա ուրախություններից: Հարգանքով վերաբերվեք զուգընկերոջ անձնական կյանքին, նրան չպարտադրեք սեփական կարծիքն ու ճաշակը և չնեղանաք նրանից, եթե նա ձեզ ջերմեռանդորեն նոր անակնկալներ չի մատուցում: Չսպասեք, որ նա ձեր մտքերը կարդա կամ գուշակություններ անի: Պարզապես պետք է անկեղծորեն խոսել միմյանց հետ՝ խուսափելով քննադատությունից, գրում է erkusov.com-ը: Ճկուն լինեք դերերի վերաբաշխման հարցում, կառչած չմնաք դերերի ավանդական բաժանմանը և անհրաժեշտության դեպքում դրանք որոշ ժամանակով փոխեք: Շատ բնական համարեք, որ ձեզնից յուրաքանչյուրն ունի իր անձնական կյանքը, հետաքրքրությունները և ընկերախումբը (այդ թվում նաև՝ հակառակ սեռի ներկայացուցիչներ) ունենալու իրավունք: Ընդունեք, որ ամուսնական հարաբերություններում ստորադասներ և վերադասներ չկան, այլ կան հավասարապես և արդարացիորեն բաշխված դերեր, որոնք կամքին հակառակ չեն ստանձնում: Պատասխանատու և հոգատար եղեք միմյանց նկատմամբ: Գնահատեք ինչպես ձեր, այնպես էլ զուգընկերոջ արժանիքները, մի՛ ստորացեք և մի՛ ստորացրեք: Ինչպես ուրախ և սրամիտ ճանապարհորդն է իր խանդավառ պատմություններով ու ծիծաղով վարակում ճանապարհորդողներին, այնպես էլ դուք կարող եք ժպտալ ձեր կողակցին. հավատացե՛ք, նա էլ ձեզ կպատասխանի նույն կերպ: Ու կյանքը կդառնա առավել տանելի, ավելին՝ կդառնա հաճելի ուղևորություն:

Հասարակագիտության դասաժամին կիրառվող մեթոդներ:

1. «ԿԱՆԽԱՏԵՍՈՒՄՆԵՐ ՀԻՄՆԱԿԱՆ ԱՐՏԱՀԱՅՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՀԱՄԱՐ»

Նոր ուսումնական նյութը կարդալուց առաջ ուսուցիչը գրատախտակին դուրս է գրում 3-4 հիմնական արտահայտություն և հրավիրում աշակերտներին մտածել ու հանդես գալ որպես «խուզարկու»:

Այնուհետև գրատախտակի վրա ուսուցիչը նկարում է «Գիտեմ/ Ուզում եմ իմանալ/ Ինչ սովորեցի» տրամագիրը

Ի՞նչ ենք մտածում, ի՞նչ գիտեինք	Ի՞նչ ենք ուզում իմանալ	Ի՞նչ սովորեցինք

Աշակերտներին առաջարկվում է մտածել զույգերով: Նրանք կիսում են իրենց մտքերը, ուսուցիչը դրանք նշում է առաջին սյունակում: Երկրորդ սյունակում ուսուցիչը գրում է այն հարցերը, որոնք առաջանում են քննարկման ընթացքում: Այնուհետև սկսվում է թեմայի բովանդակության բացահայտման անմիջական աշխատանքը:Դասի վերջում լրացվում է երրորդ սյունակը:

2. «ԿԼԱՍՏԵՐ»

Սա ուսումնական նյութի տրամագրով ցուցադրելու միջոց է: Կլաստերը փաստորեն մտածողության ոչ գծային ձևի արտացոլումն է:

- ✓ Դատարկ թերթիկի (գրատախտակի) մեջտեղում գրվում է ստեղծագործության հիմնաբառ կամ նախադասություն, որը ներկայացնում է գաղափար: Շուրջը գրվում են բառեր կամ նախադասություններ, որոնք արտահայտում են տվյալ թեմայի համար հարմար մտքեր, փաստեր, պատկերներ:
- ✓ Ներկայացված բառերը կապվում են ուղիղ գծերով՝ առանցքային հասկացությանը:



Այս աշխատանքի ընթացքում աշակերտները ձեռք են բերում ուսումնասիրած նյութը համակարգելու, դասակարգելու, եզրահանգումներ ձևակերպելու, նոր գիտելիքները ինքնուրույն ձեռք բերելու կարողություններ:

Աղյուսակում լրացրած նյութերի քննարկման գործընթացքում աշակերտները ոչ միայն ներկայացնում են ուսումնական նյութից իրենց ձեռք բերած գիտելիքները, այլև դիտակում են դրանք իրենց տեսանկյունից, հաստատում են կամ մերժում բացահայտած տեղեկույթը, հիմնավորում են իրենց մոտեցումները՝ կապելով կյանքից ձեռք բերած փաստերին:

«ՀԻՆԳ ՐՈՊԵԱՆՈՑ ԷՍՍԵ»

Մեթոդական հնարն իրականացվում է դասի վերջում՝ կշռադատման փուլում օգնելու աշակերտներին ավելի գիտականորեն հասկանալ իրենց մտքերը ուսումնասիրված թեմայի վերաբերյալ: Սա ուսուցիչներին տալիս է հնարավորություն՝ հասկանալու, թե ինչ է տեղի ունենում դասարանում: Այս շարադրանքը աշակերտների առջև դնում է երկու խնդիր՝

ա) գրել մեկ նախադասություն, այն մասին, թե նրանք ինչ են սովորել այդ թեմայից,

բ) գրել մի հարց, որը նրանց մոտ անպատասխան մնաց:

Ուսուցիչը հավաքում է այս գրությունները, և կարող է դրանք օգտագործել հաջորդ դասը պլանավորելիս:

«Միջառարկայական կապ»

Այս մեթոդական հնարի ժամանակ հասարակագիտություն և ՀԵՊ առարկաների միջև ուրույն մեթոդական կապ է հաստատվում, որովհետև ՀԵՊ առարկան մեծ դեր ունի «Հայկական ավանդական ընտանիքների» և «Ազգապահպանության գործում»:

Օրինակ

● Ի՞նչ եք հասկանում ընտանիք ասելով:

● Ի՞նչպիսին է եղել հայկական ավանդական ընտանիքը և ժամանակի ընթացքում այն ի՞նչ փոփոխություններ է կրել:

● Ի՞նչպիսին է հայկական ընտանիքը այսօր:

● Ի՞նչ պետք է անել հայկական ընտանիքի ամրության պահապանման համար:

● Ի՞նչու է այսօր, առավել քան երբևէ կարևոր դարձել ազգային հոգևոր նկարագիր կերտող և դաստիարակող ընտանիքի գոյությունը:

● Ի՞նչու է հայ ընտանիքը համարվում ազգային առանցքային կարևոր արժեք:

«Կոնֆլիկտի լուծման եղանակներ»



● Վերլուծեք իրավիճակը:

●Հարգալից վերաբերվեք դիմացինին:

●Ակտիվ ունկնդրեք:

●Հարցեր տվեք:

●Փորձեք գտնել կոնֆլիկտի լավագույն լուծումը:

ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆ

ՈՒսումնասիրելով Ընտանիքի հոգեբանություն, կոնֆլիկտներ թեման՝ եկա այն եզրահանգման , որ յուրաքանչյուր անձ ով պատրաստվում է ընտանիք ստեղծել պետք է ինքը իր հոքեբանությամբ պատրաստ լինի դրան: Առողջ ընտանեկան մթնոլորտը ամենակարևոր գործոնն է անձի առողջ հոքեբանական զարգացման համար: Ընտանիքում անառողջ մթնոլորտի առկայության դեպքում խաթարվում է երեխայի մանկան հոքեբանական զարգացման սահուն ընթացքը, ինչի արդյունքում կունենանք անառողջ հոքեբանությամբ և մտածելակերպով սերունդ: Ընտանեկան հոքեբանության մեջ կարևոր է այն փաստը, որ բոլոր անդամները պետք է գնահատեն միմյանց, հեշտությամբ փոխզիջման գնան, միասին պլանավորեն ընտանիքում կատարվող կարևոր գործողությունները, և երբեք չհուսահատվեն կյանքի ու դժվարությունների սև շերտերից: Ընտանիքում ամենակրևոր ու նշանակալից դերը ծնողներինն է, քանի որ հենց նրանք նե երեխաների մեջ սերմանում բարոյական սկզբունքներ, խոսում ավանդույթների մասին, նպաստում նրանց շրջապատի և գիտելիքների զարգացմանը:Շատ կարևոր է, որ երեխան մեծանա առողջ հոքեբանությամբ ընտանիքում, որտեղ նրա մեջ կսերմանեն ուժեղ ընտանիք ունենալու գաղափարը:

Օգտագործված գրականության ցանկ

1. http://www.hogeban.info/%D5%A8%D5%B6%D5%BF%D5%A1%D5%B6%D5%AB%D6%84%D5%AB-%D5%B0%D5%B8%D5%A3%D5%A5%D5%A2%D5%A1%D5%B6%D5%B8%D6%82%D5%A9%D5%B5%D5%B8%D6%82%D5%B6.php?fbclid=IwAR3ZTlSNkcK_8-mpM90LnqjDzqPiDkT6llb40kcBE5scKy229Zjr-o8YTYY
2. https://shabat.am/am/article/77294/Yntaniqi-hogebanutyun.-YErjankutyan-oronman-chanaparhin
3. https://hy.wikipedia.org/wiki/%D4%B8%D5%B6%D5%BF%D5%A1%D5%B6%D5%A5%D5%AF%D5%A1%D5%B6_%D5%B0%D5%B8%D5%A3%D5%A5%D5%A2%D5%A1%D5%B6%D5%B8%D6%82%D5%A9%D5%B5%D5%B8%D6%82%D5%B6?fbclid=IwAR3tgbKFE7Ttc5ZpPd-y-gUmeHc0FUGZIAFHwISrh8fehpLvHK9HILbDsdU
4. https://www.doctors.am/family-psychology?fbclid=IwAR04nU2Mq4tXVSOsrRWCA0bZ0QNGzd4LE2tDfGX8vHilFoR0LMq-7T5lqZQ
5. https://hy.wikipedia.org/wiki/%D4%BF%D5%B8%D5%B6%D6%86%D5%AC%D5%AB%D5%AF%D5%BF?fbclid=IwAR0tZrtW24fXFydxcWCEU0K00M3s-_Ywi8v2J5wZHzqhh3YqOY-QCA43bLg
6. Արզումանյան Սերգեյ- ‹‹Հոգեբանություն›› Երևան 2003
7. Կովալյով Ա.Գ.- ‹‹Հոգեբանություն›› Երևան 1970թ.
8. Պետրովսկի Ա.Վ.- ‹‹Տարիքային և մանկավարժական հոգեբանություն›› Երևան 1977թ.
9. Նալչաջյան Ալբերտ - ‹‹Հոգեբանության հիմունքները›› Երևան 1997թ.